

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն.— Կիրակնօրեայ զրոյց.
Նամակ վերին-Ազգութիւն. Նամակ Խմբագրութեան ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՏԻ.
Քիմիայի լուրեր. ՆԱՍԻՆ ԼՈՒՐԵՐ.—
Մանրակար.— ՀՅՈՒՄՈՐԻՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՆ.
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՏԻ

ԿԻՐԱՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Անցեալ կիրակի, իմ նախաբանի մէջ, ձեզ
անմիջապէս, ընթերցող, այն կարեւորական
ընթերցողի հետ, որ իսկական, չօգտակելի, ան-
կապած դրախտ պիտի դարձնէ մեր երկիրը.
Թարգմանական օրդանիւնից մնացորդ թիւերը, ծոյլ
ու զուարճատէր վրացին գրել են այդ բնական-
աւ լրագ. «Ման» եւ զննութիւն հայերէն:

Ու երբ այդ թղթի պատասխիլը իր չորս հատ
բառերով մեզ են մատուցանում, մենք ծիծա-
ղում ենք. Հասկանում ենք, թէ ինչու փուշ
ենք մեր զրացիներին աչքու աչքով վրացին իր
կայտաւր գրաւ է դնում հայ վախճանուի մօտ
եւ հիշաւոր տոկոսներով վերցրած փողը մի-
քանի օրվայ մէջ քանուցում է տալիս վերայի այ-
գիներում ու անպա մնում անտուն-անտէր,
մենք հասկանում ենք, որ նա պիտի ասէ. «հայ
վախճանուին, դժուրէր բաժին պիտի դարձնէ
նրան ինքնին այն չէ զայրացում, որ ինքը
չը գիտէ չափաւոր ազգելը, չը գիտէ իր կա-
րածքը շահաբործելը, նրանով հարստանալը, այլ
այն, որ կայ աշխատանքով մի վաճառք, որ կոչ-
վում է հայ վախճանու Անօգնական երեխայի
պէս նա լաց է լինում, փոխանակ տղամարդի
պէս կուրծք. նա չէ հասկանում, որ ինքն է
իր ծուրութեամբ եւ դատարկ պոստիւրով
թաւալ երեւան հանում, ապրեցնում վաշխա-
տուն, որ վաշխատուն սովից կը աստիւնէ,
եթէ հասարակութիւնը պատրաստված լինի:
Ոչ այսպիսի բաների մասին նա չէ մտածում,
այլ միայն կուրծք է ծեծում, թէ հայ վախճա-
նու կայ...»

Թիւրքն էլ ունի պատճառներ հայից դժգոհ
մնալու. նա տեսնում է, որ իր երեկվայ
սարուկը, այն անպա արարածը, որի համար
ինքը մի երկնքի պատիժ էր երէկ, այսօր աշ-
խատում է գլուխը բարձր բռնած, հասկանալով իր
խառնընթերցը. Եւ երեկվայ փառանկ ստրկա-
տէրը այսօր իր ճակատագրական անշարժու-
մատուն Գերմանացու, Ֆրանսիացու թէ անգ-
լիացու ու ֆանտազիստ, միջնորդ նրա ստրկե-
կը աշխատում է առաջ գնալ, գործում է, աս-
պարէզ չէ տալիս խաղաղ մրցութեան դաշ-
տում...»

Այն, հասկանում ենք թէ ովքեր են մեզ մահ
եւ զննութիւն ցանկանում:
Բայց ինչպէս հասկանալ, որ մի օտար, բո-
լորովին օտար մարդ, օրինակ, մի գերմանացի,
զուով մեր երկիրը, նոյն կերպով է դատում
մեր մասին:

Ասել թէ գերմանացին էլ նախապաշարված
է մեզ դէմ, ունի մեզ հետ զրացիական հա-
շիւներ.— անհիշեթիւն կը լինէր. Ահա մի
Ֆան-Մասուլ հրատարակում է մի գիրք, որ
չառ լաւ ընդունելութիւն է գտնում մամուլի
կողմից, իբրեւ մի գնահատելի, լուրջ ուսում-
նասիրութիւն. Հեղինակը ճանապարհորդել է
մեր երկրում, տարիներ աշխատել է ուսում-
նասիրութեան վրա. Եւ սակայն, հայերի մա-
սին նա տալիս է այնպիսի վկայութիւններ, ո-
րոնք հրճանք կը պատճառեն այնպիսի ուս-
անալ հայակերներին, ինչպէս են վէրիկո, Սու-
վորին, Գրինգոմա...»

Ինչու է այսպէս:
Մեզ տեսնում են, բայց մեզ չեն հասկա-
նում. Ուրիշ պատճառ եւ չեն գտնում:
Այն, մենք պակասութիւններ ունենք, այն
էլ ինչ խոշոր պակասութիւններ. Ո՞վ է թագ-
ւորում մեր արարածները. Մենք մի Ֆան-Մասուլից
խորհրդապատկի լաւ ենք տեսնում մեզ, մենք

բացի զրանից այն առաւելութիւնն ունենք
Ֆան-Մասուլից, որ անձամբ այրվում, տապալ-
վում ենք մեր արարածների մէջ, տեսնում ենք
ամեն օր մեր թշուառութիւնները, տեսնում
ենք նրանց բուն պատճառները, տեսնում ենք,
որ մեր վերքերն են մեզ լափում. Բայց եւ
այդպէս, չենք վառվում, չենք յուսահատվում,
նախապիք չենք համարում մեր ծագումը, մեր
հայ լինելը. Հասկանալով ամեն ինչ, զգալով
ամեն օր, ամեն ժամ մեր անճոռնի պակասու-
թիւնները, մենք, այնուամենայնիւ, մեզ հա-
մար պատիւ ենք համարում հայ մնալը, հայ
կուրծքը:

Ինչու:
Մենք միայն մեր այսօրվայ օրը չենք ճանա-
չում. Մենք միայն այն չը գիտենք, թէ ուր
ենք կանգնած, այլ գիտենք եւ այն, թէ ճիշտ-
դից ենք գալիս:

Մենք գալիս ենք մի սոսկալի, անօրինակ
անցեալից. Գրիգոր Արծրունին իր ֆելիէտոն-
ներից մէկում նմանեցնում էր Հայաստանը մի
պոռնիկ կնոջ. Բա՛նքի իր «Իսկիթ-Բէկի» մէջ,
արծարծելով նոյն այդ նմանութիւնը, հարց է
տալիս. Թէ ո՞վ ասեմ, որ չէ պատկել այդ պոռ-
նիկի հետ, ո՞վ ասեմ որ չէ պղծել նրան. Նոյն
իսկ անապատի տափակաքիթ, անճոռնի բնա-
կիւնը ասել է մեր պոռնիկին իր գրկի մէջ, չօ-
չափել է նրա մարմինը, իր համբոյրներն է
զրօյնել նրա վրա. Եւ այդ սանձարձակ, ան-
արգել պոռնիկութիւնը շարունակվում էր հազա-
րաւոր տարիներ. Մի տարի, տասը տարի չէր
ապականված, պղծված մեր անկողինը, այլ
իսկ ամբողջ դարեր, տասնեակ դարեր. Դժբախ-
տով անդունդների մէջ ընկած պոռնիկը
առանց չլուրի, առանց գիմարութեան փոփո-
խում էր իր տարփածութիւնը. մէկը յաղորդում
էր միւրի, որպէս զի տեղի տալ մի ուրիշին:
Եւ այսպէս անվերջ... Մեր արեւը փչացաւ,
ապականվելը, մեր երեսի վրա ամօթի կտոր չը
մնաց. Ամեն կողմից կեղտոտված, երեսի վրա
անօգնական ընկած պոռնիկ... Տեսնել էք այս-
պիսի հազարամեայ դժբախտ...

Մենք չենք պարծնում, որ այսպէս ենք եղել.
Ինչ պարծանք է դարաւոր, անընդհատ պոռն-
կութիւնը. Մենք միայն դարմանում ենք, որ
դուք չէք հասկանում, թէ ինչու այսպէս ենք,
չէք հասկանում, թէ ուրիշ կերպ չէինք էլ կա-
րող լինել...

Մեզ անդամահատել, այնպիսի է մի հիշ-
չաւոր պատմութիւն, եւ դուք դեռ դատողու-
թիւններ էք անում. Ո՞ւմ հետ էք մեզ համե-
մատում. Գերմանացու, Ֆրանսիացու թէ անգ-
լիացու հետ. Հազարաւոր տարիների ընթաց-
քում միայն չողացող սուր տեսնել իր գլխի
վրա եւ չապականվել. Չապականվել, երբ եւ-
րոպացին այդպիսի անէծք չէ տեսել եւ դար-
ձեալ հրեշտակ չէ, այլ մարդ՝ իր պակասու-
թիւններով եւ արժանաւորութիւններով. Չա-
պականվել, երբ Եւրոպան մի անգամ է տեսել
հոնքերի արշաւանքը եւ մինչեւ այսօր էլ սար-
սափով է յիշում նրան, մինչեւ մենք հազար
ու բիւր անգամ ենք հոնքերի արշաւանքին հե-
թարկվել, մենք՝ մի բուն դժբախտ ժողովուրդ,
ցաւ ու ցրիւ ընկած, անգլիւ, անպաշտպան,
թխամիսների ծովի մէջ օր ու գիշեր խեղդ-
վելիս...

Դուք դարմանում էք, բայց մենք չենք զար-
մանում. Որովհետեւ դուք չը գիտէք, իսկ մենք
մեր ուսերի վրա ենք տանում մեր այդ ան-
ցեալի ամբողջ դառնութիւնը. Դուք միայն
կարգացել էք Չիքիդիներ, Լէնկիթիւնների
պատմութիւնը, իսկ մենք այդ պատմութեան
զարդեր կազմող արեւան գետերն ու լճերն ենք
տուել մեր փոխ ու չորացած մարմինը:

Եւ Լէնկիթիւնները, Տուրքիները մեզ հա-
մար հեռաւորութեան մէջ կորած ժամանակնե-
րի աւանդութիւններ. չենք Ընդամենը մի հա-
րիւր տարի առաջ մենք ստորակներ էինք մանր-
մունք, բայց նոյնպէս գազան, նոյնպէս վաշ-
րենի Լէնկիթիւնների ձեռքում. Այն իսկ ժա-
մանակ, երբ գերմանացին իր Գէօթէի ու Շիլ-
լերի հանձարն էր վայելում, երբ Ֆրանսիացին

իր Վոլտէրսերի, Բուսոնների, Միրաբոների ա-
ռաջնորդութեամբ գնում էր դէպի լոյս եւ ա-
զատութիւն, հայոց կաթողիկոսը մեծ պատիւ,
մի այնպիսի ժամանակ, երբ քրիստոնեայ եկե-
ղեցին պսակ չէ ընդունում, շտապով հրաման-
ներ էր ուղարկում, որ իսկոյն, բռնի կերպով
պսակին ութ տարեկանից վեր բոլոր աղջիկ-
ներին Եւ գիտէք ինչու. Որովհետեւ մի խանի
եղբայր, մի ինչ-որ բէկ, ուզում էր հարեմ
կազմել իր համար եւ դուրս էր եկել հայերի
մէջ աղջիկներ ընտրելու իր համար. Եթէ այս-
պէս էր մի անշան խանի եղբայր, անշան բէկ,
կարող էր բռնանել, թէ ինչ կը լինէր մի աւելի
մեծ բռնակալ...

Ո՛չ, մի համեմատեք մեզ ձեզ հետ. Ի՞նչպէս
էք համեմատում. Ձեր համալսարանները չենք
ունենցել մեր երկրում, որպէս զի սերունդից
սերունդ կրթվելիք. Այն ժամանակ, երբ ձեր
համալսարաններում լարձը գիտական վէճեր
էին տեղի ունենում, մենք կրթաբանը վաճառ-
ել շատ չուէինք, ուր տգէտ, վայրենացած
վարդապետը մի կտոր գրագիտութիւն սովոր-
եցնէր. Բայց ինչ համալսարան. Որէնք, ամեն-
քի համար հաւասար, թէկուզ բարբարոսական
օրէնք էլ չէին տալիս մեզ, նախիր կույրող
ժողովուրդն էր:

Եւ զարմանում էք, երբ դարերով ցեխի մէջ էին
կոխտովում մեր սուրբ հասկացողութիւնները,
մեր մարդկային կերպարանը. Չարմանում էք,
երբ մեր արտասանքով թրջած հացը մեր տէ-
րերը չէին ուզում ուտել առանց ատամնալարձ
ստամոքսի մեղմանից. Մնացել է մարդկային հը-
նարագիտութիւնների բառարանի մէջ մի ստո-
րութիւն, որին մենք ենթարկված չը լինէինք...

Մեզ նոյն իսկ մեր հարեւանների հետ էլ մի
համեմատեք. Ո՛չ դք մեզ պէս չէ եղել:

Եւ ասում էք՝ թէ հայը վաճառական է. Ա-
սում էք զգուշանքով ծամածռութեամբ, ասում
էք արհամարհանքով իր թիւերը վեր քաշելով եւ
անցնում. Բայց դիմեք, որ դա մեր պատմու-
թեան թողած մի ծանր, խեղդող ժառանգու-
թիւնն է, որ դա մեր հազարամեայ պոռնիկու-
թեան անէծքն է... Ո՛չ, չէք իմանում:

Ասացե՛ք, կարող էր հայը ուրիշ բան լինել.
Կարող էր դառնալ աշունակամ, կուսակալ, խո-
շոր կայունածատէր, կարող էր զինուոր գրվել.
Հայրենասիրութեան հրաշքեր ցոյց տալ, հըռ-
չակվել խաղաղ, կուլտուրական քաջազորու-
թիւնների մէջ. Հայը, որ նախիր էր, որ կնոջ,
երեսների վրա անգամ սեփականութեան ի-
րաւունք չունէր, որի գրգռումը դանակ ան-
գամ չը կար...

Գոյութեան կոիւր, չըջապատին յարմարվե-
լու անհրաժեշտութիւնը հային դարերի ըն-
թացքում մղում էր դէպի վաճառականութիւ-
նը. Ուրիշ ասպարէզ չը կար նրա առջեւ. նա
կամ հողագործ պիտի լինէր, կամ արհեստաւոր
կամ վաճառական. Մնացածը դուրս քշվելով իր
հայրենի հողից, իբրեւ համաշխարհային մի
թափառական, նա կարող էր միայն վաճառ-
ականութեան մէջ գտնել բախտ. Մի Շահ-Աբաս
բարբարոս էր ամենքի վերաբերմամբ եւ միայն
վաճառականներին էր խնամում.— Ինչպէս վա-
ճառական չը դառնայ, Գաղթական հայը Լե-
հաստանում արտոնութիւններ էր ատանում
իրեւ. վաճառական.— Ինչպէս չը դառնային
վաճառական. Մեզ բռնութեամբ հանում էին
մեր երկրից, տանում էին ուր կամենում էին,
առանց հարցնելու տարածութիւնների, հեռա-
ւորութիւնների մասին. Իրզանդական կայսր-
ները մեզ քշում էին Բալկանեան թերակղզին,
աղանդներով մեզ տանում էին Բագու. Եւ պա-
հանջում էին, որ մենք վաճառականութեամբ
ժողկեցնենք իրանց երկիրները. Ուրիշ բան չէին
պահանջում. կարող էինք վաճառական չը դա-
նալ:

Այն, դա մի դժբախտ դատարարութիւն
էր. իբրեւ ստորակներ, մենք կարող էինք մեր
զուրկ պահել խորամանկութեամբ, չողքոր-
թութիւններով, խաբեւայութեամբ. Դրանք էին
մեր միակ զենքերը դոյութեան անեղ կուր:

Չալտում. Չարմանում էք, որ մենք մեր տղի-
տութեան, մեր անօգնականութեան մէջ վարա-
կեցինք մեր արիւնը այդ յատկութիւններով.
Յոյց տուէք մի ուրիշ կրթութիւն, որ տուած
լինեն դժբաղդութեան անվերջ դարերը, եւ
մենք հեռացած լինէինք նրանից. Յոյց տուէք,
թէ կարելի էր վաճառական չը դառնալ, բայց
մենք դարձանք:

Այն, ուրիշ ճանապարհ չը կար,— կամ մահ,
կամ արհեստաւորի մուրճ, կամ վաճառականի
զաւգ. Եւ մենք այդ երեքն էլ բռնեցինք:

Այսօր դուք միայն վաճառական հային էք
տեսնում. Դուք չէք տեսնում ճակատի քրտին-
քով ազդող հողագործին, որ մեր ազգի 90%
է կազմում, չէք տեսնում մեր արհեստաւորին.
Բայց ո՞վ է մեղաւոր, որ դուք տեսնել չէք
կարողանում:

Մեղաւորը, այն, դուք էք միայն. Եւ ձեր
կուրութիւնը մի մեծ յանցանք է պատմու-
թեան եւ արդարութեան առաջ. Դուք այնպէս
էք ներկայացնում ամբողջ հայ ազգը, իբրեւ
թէ նա ամբողջապէս բաղկացած է վաճառա-
կաններից եւ հարստահարում, կեղեքում է ու-
րիշ ազգերը. չ, կոյր պարոններ, ստացե՛ք
տեսնելու կարողութիւն եւ դուք կը տեսնե՛ք,
որ վաճառականութիւնը մի, իրաւ, մեծ եւ
ուժեղ դատակարգ է մեզանում եւ նա ուրիշ
ազգերը կեղեքելուց առաջ, կեղեքում ու ծը-
ծում է իր սեփական ազգը, իր հայրենակիցնե-
րին. Եւ հայ եմ եւ վկայում եմ ամենքի ա-
ռաջ, որ ինձ ամեն օր խաբում, կեղեքում է
հայ վաճառականը, սկսած վերջին մանրավա-
ճառից մինչեւ առաջին գեղջիկին. Եւ հայ եմ
եւ վկայում եմ, որ հայ վախճանուն ոչ ոքին
այնպէս չէ խեղդում, ինչպէս ինձ, իր հարա-
զատ արիւնակցին. Եւ հայ եմ եւ վկայում եմ,
որ Բագուի միլիոնատէրը ինձ, արհեստաւորիս,
ինձ, մակիս, ինձ, գործակատարիս, է չարտում
փողոց, արհամարհելով իմ հառաչանքները, իմ
լալը, իմ ամբողջ դժբաղդութիւնը:

Եւ հայ եմ եւ ասում եմ ձեզ, ինչ օգուտ
ունեմ ես, որ հայ վաճառականներ, հայ հա-
րուստներ շատ կան. Արեւօք տեսնված է,
որ վախճանուի մուրհակը, սովորաբար գաղը,
միլիոնատէրով բանկը խնայէ ինձ այն պատճա-
ռով, որ ես հայ եմ. Դուք չէք համարձակվել
այսպիսի բան ասել. մեր կենքի բիւրաւոր
մարտիրոսագործութիւնները կը կանգնեն ձեր ա-
ռաջ եւ կը պատժեն ձեր այդ տեսակ ստախո-
սութիւնը իրանց արիւնով եւ արտասուքնե-
րով...

Եւ վերջապէս, ուր թագնենք համաշխար-
հային յօգիկան. Ե՛րբ, ուր, որ երկրում, որ
քաղաքում տեսնված բան է, որ մուրհակը,
գաղը, բօրան ազգայնական խտրութիւններ ի-
մանայ, մէկին չոյէ, միւսին խնայէ, մէկին բա-
րեբարութիւն անէ, միւսին գերեզման դնէ:
Եւ ես հարցնում եմ. ինչ իրաւունքով դուք
իմ արիւնը ծծող վաճառականի պատճառով ա-
տում էք ինձ. ինչու իմ ամենօրեայ քրտինքը,
իմ ազնիւ աշխատանքը, իմ մարդկային ցաւերը
դուք արհամարհում էք, ոտի տակ էք տալիս
լոկ այն պատճառով, որ ես, իբրեւ ազգ, ու-
նեմ վաճառականական դատակարգ էլ:

Բաւական չէ, վերջապէս, փարիսեցիութիւ-
նը. Հայ վաճառականը մեծ մասամբ բարոյա-
կան հրէշ է. Եւ համաձայն եմ. Բայց ասացե՛ք,
միթէ գերմանացի, ֆրանսիացի, բելգիացի վա-
ճառականը հրեշտակ է. Արատներ չը կան եւ
քաղաքակրթված ազգերի մէջ. Եթէ չը կան,
ինչիցն է այն հաւուր պատմաբանը, որ հէնց
մեր օրերում բորբոքված է կապիտալիստի աշ-
խատող ձեռքերի մէջ, բօրանի եւ աշխատաւոր
ժողովուրդի մէջ. Երբ ես կարդում եմ Օստրովս-
կու պիէսները, տեսնում եմ, որ ոտու վաճա-
ռականութիւնը հայ վաճառականութեան հա-
րազատ եղբայրն է. Երբ կարդում եմ Սվիֆտի
երգիծարարութիւնները, տեսնում եմ որ անդ-
էլ չէինք որքան գերմանական կեղտեր են դուրս
բերել...

Դուք կարող էք ասել, թէ Եւրոպան ջոկ է,

այնտեղ մարդկային արատները չեն կարող մեծ չարիքներ գործել, որովհետեւ այնտեղ կայ քրիստոնեական խաղաղություն, կայ կռիւ, կայ կազմակերպւած դիմադրութիւն չարիքի դէմ:

Օ՛ր, նայեցէ՛ք, լաւ նայեցէ՛ք մեզ եւ դուք պարզ կը տեսնէք, որ մենք էլ աշխատում ենք ձեզ նմանվել, ձեր աշակերտները դառնալ այդ կուրսի, այդ դիմադրութեան մէջ: Մեր արատները մեզ համար պարծանք չեն, մենք զգում ենք նրանցից անհամեմատ աստիկ կերպով, քան դուք, եւ մենք ամեն ինչ առաջ ենք քաշում նրանց ողջացնելու համար—հրապարակական քննադատութիւն, դատաւարականութիւն, ուսում...:

Ճիշդ է, մեր ոյժերը շատ են թոյլ, ճիշդ է, մեր արատները շատ են թանձր, շատ են հին, արմատացած: Բայց եւ մեր ինքնամտարկումը խիստ է, անողորմ: Դուք չէք տեսնում այս երեւոյթը: Ինչն է ձեզ հետաքրքրում—Միայն այն, որ հայ վաճառական է: Եւ ուրիշ ոչինչ... Միջնորդ դուք պէտք է հետաքրքրվէք եւ այն հարցով, թէ ինչպէս է վերաբերւում ձեզ այդքան ատելի ազգը իր վերքերին: Այն ժամանակ դուք կը տեսնէք, որ հայի արատները ոչ ոք չէ մերկացրել, այնպէս չէ անարդ սխալին բեւեռել, ինչպէս ինքը, հայը:

Ոչինչ էք համարում դուք այս բանը: Այն ժամանակ ջնջեցէ՛ք ձեր քաղաքակրթութեան պատմութիւնը, իսկ մենք չենք ջնջի, մենք կը շարունակենք մեր կռիւն մեր բազմադարեան պոռնկութեան հետեւանքների դէմ: Մենք չենք յոգնի, սերնդից սերունդ կը թողնենք նուիրական աւանդ այդ սուրբ պատերազմը շարունակելու համար: Մենք հաւատում ենք, որ անյոյս հիւսնող չէ մի ազգ, որ իր սեփական մատներով քրքրում է իր վերքերը, նայում է նրանց մէջ, քննում է, տեսնում:

Մենք, ճիշդ է, երկար, շատ երկար պիտի մղենք մաքառում: Բայց չենք յուսահատւում: Յուսահատականը այն կը լինի, եթէ մոռանայինք մեր պարտքը, եթէ թուլացնէինք մեր կռուող բազուկները:

Ահա ինչեր չէք իմանում դուք, փարիսեցի դատաւորներ...:

Լ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱՅՈՒԼԻՍԻՑ

Յուլիսի 10-ին

Յուլիսի 8-ի հեղեղի մանրամասնութիւնները խոստացայ հաղորդել ձեզ: Ուրախութեամբ պիտի ասեմ, որ ոչ այստեղ, ոչ Տանակերտում եւ ոչ Քաղաքիկում հեղեղը զգալի վնաս չէ տուել: Մարդկային զոհ չէ եղել, անասուններ չէ տարել: Քչել, տարել է մեծ քանակութեամբ գերաններ, աւերել է աղբիւրներ, առուներ, փչացրել է քիչ քանակութեամբ ծառեր, այգիներ: Ագուլիսում տարել է մի կամուրջ, մեզ մօտ վնասը գուցէ հազարի էլ չը հասնի:

Բայց պիտի ասել, որ օտ փոքր հեղեղ չէր, մինչեւ անգամ իր հրէշաւոր բնաւորութեամբ մասամբ յիշեցնում էր 1884 թ-ի աղետալի հեղեղը: Մեծ աւերումներ չը գործեց այն պատճառով, որ գետի տաշտը շատ խոր էր: Բացի այդ՝ ծառեր չը բերեց իր հետ, այլապէս Ագուլիսը դրութիւնը այս անգամ էլ կրտսերական կը լինէր, որովհետեւ, այս ահալքին գետածորը լցնելով, ջրախառն տիգրը, ուռած, փրփրած, դուրս էր փոխում ափերից դէպի ճանապարհները, որպէս հրաբխային ժայթքումներ: Ի՞նչու չէր ագուլիսին ահաբեկված. գետեզրեայ բնակիչները, օտարապիճ՝ «Աղասարն» էին ապաստանել, իսկ մի քանիսը ա. Գրիստափոր եկեղեցում աշխատում էին մեղմել նախախնամութեան ցասումը՝ մոմեր վառելով...:

Սակայն ոչ փախելը, ոչ մոմեր վառելը չեն կարող ազատել մեզ հեղեղի վնասներից, եւ բնութեան այս սոսկալի արհաւիրքը, վաղ թէ ուշ, սոսկալի աղէտներ պիտի առաջացնէ մեզ համար, որովհետեւ, ինչպէս պատմում են, այս անգամ հեղեղը առաջացել է Նիգիդի գիւղի միայն մի ձորից. այնտեղ կան բազմաթիւ ձորեր, եթէ պատահի մի քանիսից միանումազ հեղեղ, այն ժամանակ վայր եկել է, ագուլիսը ստարել, Հարկաւոր է մի հնար մը—տաճիկը համար Կառավարութեան լուրջ ուշադրութիւնն ենք դարձնում այս հանգամանքի վրա:

Մենք այն տեսակ ժողովուրդ ենք, որ պիտի ստիպենք մեզ մտածել մեր մասին: Թոյլ ենք տալիս մեզ կարծի, որ կարելի է հեղեղ առաջացնող լեռներում արհեստական անտառ չինջուլ ձեռնարկել, իսկ առ այժմ թոյլ չը տալ, որ Նիգիդիի սարերում եղած բոյսերը—հոնա— եւ այլն քանդեն, ապա

փորել գետի տաշտը, որը այժմ բաւականին երես է ընկել հեղեղից. բացի այդ՝ պատմէ՛նք կառուցանել այն կէտերում, որոնք ջրի բերանումն են. դրանց աւերվելուց ճանապարհ պիտի բացվի գետի համար դէպի ուրիշ տներ. այդպիսի մէկը, օրինակ, պ. Մարտիրոս Տէր—Մկրտչեանի տունն է:

Թող այս անգամ ագուլիսին մեղմէ իր ետականութիւնը եւ այս ահալի թշնամու դէմ գին՝ վի ամբողջ ժողովուրդով եւ ոչ թէ միայն նրանք, որոնք գետի ափին տներ ունեն, որովհետեւ եթէ մէկի տունը չը տանի, այդին չը տանի, երկնան, ազգականը կարող է զոհ դառնալ: Հեղեղի դէմ պարտաւոր է զինվել եւ Ներքին-Ագուլիսը, ոչ թէ մարդասիրական տեսակետից, այլ լոկ ետական—մեծ հեղեղը պակաս վնասներ չէ կարող հասցնել եւ նրանց այգիներին:

Իսկ ինչ անուն տալ սրան, չը գիտենք—չը նայելով յաճախակի հեղեղներին, չը նայելով գետափնեայ ծառերի պատճառած վնասներին, հեղեղի ժամանակ, մենք դարձաւոր վերցնում, նոր ծառեր ենք տնկում հեղեղի բերանին: Անցեալ տարի չէր, որ էլի հեղեղ եկաւ: Եկէ՛ք, բարեկամներ, զսպե՛ք մեր ագուլիսին: Եւ աւելի խելօք լինենք, որ յետոյ չը զղջանք... Դուք հօ ճաշակել է, թէ ինչ զարհուրելի բան է Ագուլիսի հեղեղը, տեսել էք ձեր քրոջերի, երեխաների վախառնութիւնը, լացը, կոծը: Լսել էք ձեր մայրերի յուսահատ ողբը, լեղապատառ փախուստը, ձեր կանանց վտանգաւոր գրուլութիւնը, բնութեան տարեւրի այս ահեղագոյ ժամին: Քանի քանիսը այդ թշուառներից հիւսնաբանում, ներկային են դառնում, սրտի զանազան հիւսնաբանութիւններ ստանում այն յուսակտուր գոռում գոչումներից, որոտից, փայլատակուկից, կայծակից... Աւելորդ է, տը—խուր է յիշել...:

Տանակերտցի

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՈՒԹԵԱՆ

Բագու, յուլիսի 18-ին

«На вопрѣ шатка горитъ» ուռածայ իմաստուն առածը հանդէս է գալիս մի աւելորդ անգամ եւս մարդկանց հոգեբանութիւնը երեւան հանելու:

Պ. Ռ. Յովհաննիսեան «Մշակի» № 152-ում ամենայն համարձակութեամբ յայտնում է, որ իմ «Ուլ մեղաւոր» յօդուածում ակնարկած զաղբիւր տիպը արձանագրելիս՝ ես աչքի առաջ եմ ունեցել իրան, որովհետեւ ճիշտ յօդուած՝ ներքի ոգու համաձայն՝ «Մշակի» աշխատակիցներին մէջ միակն է, որ հրապարակօրէն ցաւակցութիւն, կարեկցութիւն է արտայայտում դէպի աշխատող դատակարգը, հարուածներ է տեղում, զրկվածների դատը պաշտպանում եւ այլն:

Ինքն ըստ ինքեան սխալ է պատճառաբանութիւնը «Մշակի» աշխատակիցները՝ սկսած Իգդիրից, Երեւանից, Գանձակից, Սխալաբլաբից եւ այլն եւ այլն, աւելի եւ աւելի ցաւակցութիւններ, կարեկցութիւններ, աւելի հարուածներ են տեղացել եւ զրկվածների դատը պաշտպանել, քան թէ ինքը՝ պ. Յովհաննիսեանը: Այս մէկը Երկրորդ, եթէ սահմանափակվենք Բագուի շրջանով, այնու ամենայնիւ կը նկատենք, որ պարտից զատ կան եւ ուրիշ թղթակիցներ, որոնք ոչ պակաս «հարուածներ են տեղացել եւ «բողոքներ արձակել»: Ապացոյց բանի այն, որ «Ուլ մեղաւոր» յօդուածիս լոյս տեսնելու հետեւեալ օրը քանի մարդիկ դիմել եւ հարցրել են՝ արդեօք այդ կէտում ես աչքի առաջ չեմ ունեցել X-ին (ոչ պ. Ռ. Յովհաննիսեանի):

Սակայն այդ չէ խնդիրը: Ուշադրութեան արժանի այն է, որ պ. Ռ. Յովհաննիսեան յայտարարում է հրապարակօրէն, —պատիւ իրան,— թէ հայելու արտացոլութիւնը իր լուսանկարն է պատկերացնում: Ուրախ ենք, որ յօդուածը նպատակի է հասնում. ներկայացրած հայելին պարզ լուսանկարներ է հրապարակ նետում: Մենք դեռ որի՞նչ լուսանկարներ էլ ենք սպասում... Ի դուրս է կարծում պ. Ռ. Յովհաննիսեան, թէ ինքն է միայն, որի գործը չէ համապատասխանում խօսքին... Ո՛չ, կան եւ ուրիշ շատ շատեր: Հինգ այդ շատ շատերին էլ աչքի առաջ ունենալով՝ ակնարկված է վերոյիշեալ տիպը:

Իսկ ինչ վերաբերում է մասնաւորապէս Իրանի պ. Ռ. Յովհաննիսեանին, այս, պնդում եմ հրապարակօրէն, որ նա եւս նոյն տիպին է պատկանում:

Ընդունում եմ պարոնի առաջարկութիւնը՝ երկու կողմից մարդիկ ընտրելու, գործը քննելու, փաստերը ստուգելու եւ հետեւանք հրապարակ հանելու համար:

Ն. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՆ

«Մշակի» հետեւեալ համարը, մեռելոցի տօնի պատճառով, կը հրատարակվի չորեքշաբթի, յուլիսի 24-ին:

Թիֆլիսում կազմակերպւում է մի խումբ, որ նպատակ ունի մօտ օրերումս ուղեւորվել Երեւանի նահանգը եւ բարձրանալ Արարատի գլուխը: Խումբը իր ուղեւորութիւնը կատարելու է գիտնական նպատակով:

Ուշադրութեան անհերքելի այն աջողութիւնը, որ ունեն քաղաքային մասնաճառութեան առաջին եւ երկրորդ խնութիւնները եւ այն հանգամանքը, որ այդ խնութիւնները գրաւել են Թիֆլիսի ազգաբնակչեան վստահութիւնը՝ քաղաքային ու պարական յուլիսի 18-ի նիստում որոշեց երրորդ խնութիւնը բանալ վերայում եւ հոգաբողութիւնն այդ մասին յանձնեց մասնաճառութեան խնութիւնների կառավարիչ Ալիխանեանին՝ աւելացնելով նրա ղեկավար մինչեւ 2000 րուբլի:

Թագաւոր Կայսրը, համաձայն ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցման, բարեհաճեց թոյլ տալ Պետերբուրգում ապրող գերմանահպատակ կաթօլիկներին կազմել առանձին ծուխ այն պայմանով, որ ծուխի կարիքները հոգացվեն գերմանահպատակ կաթօլիկներին հաշուով եւ որ այդ ծուխը ենթարկվի Մօզլիւի արքեպիսկոպոսի իրաւասութեան: Գերմանահպատակ կաթօլիկները եկեղեցու քահանան եւ նրա փոխանորդը կառավարվեն գերմանական կառավարութեան կողմից եւ կը հաստատվեն ուսուցարարութիւնից: Եկեղեցու շինութեան տեղի ընտրութեան համար պահանջվում է ներքին գործերի մինիստրի համաձայնութիւնը:

Թիֆլիսի այգեգործական ուսումնարանի աշակերտները, նոյն ուսումնարանի կոռուպորիչ Իվանովի ղեկավարութեամբ, մօտ օրերումս ճանապարհ ընկան դէպի Չակվայի Կայսերական կալուածքները՝ ծանօթանալու այն բոյսերի հետ, որոնք անցնում են կալուածքներում, եւ առանձնապէս թէյի մշակութեան հետ:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ շաբաթվայ ընթացքում Թիֆլիս կը գայ Իւրկի համալսարանի պրօֆէսոր, այգի հիւսնողութիւնների մասնագէտ Յ. Օ. Իվիցկի: Պրօֆէսորը մտադիր է մնալ Թիֆլիսում մի քանի օր:

Ղալարի քաղաքագլուխը դիմել է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին եւ խնդրել է թոյլ տալ Ղալարի քաղաքային վարչութեան պատգամաւորին ներկայ լինել այն մասնաժողովի նիստերին, որ կազմված է այդ ընկերութեան մէջ եւ որ քննում է եկեղեցիների մէջ գործածվող գինու վերաբերեալ հարցը: Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը ընդունել է Ղալարի քաղաքագլուխի առաջարկութիւնը:

Այս տարվայ նոյեմբեր ամսին Պետերբուրգում, ինչպէս յայտնի է, պէտք է բացվի պատմական եւ աշխարհային հազուատների միջազգային ցուցահանդէս: Յուզահանդէսն նախաձեռնող եւ կազմակերպող իշխանուհի Շչեքերաւովա, հազարով ցուցահանդէսի աջողութեան մասին, մօտ օրերումս դիմեց Կովկասեան երկրի նահանգապետներին՝ խնդրելով աջակցել ցուցահանդէսին եւ գրաւել այնպիսի կազմունքներ, որոնք ի ցոյց դնէին Կովկասեան ազգութիւնների պատկանող պատմական եւ ժամանակակից հազուատներ:

Յինանների մինիստրութիւնը բացատրեց, որ հայկալարկալային թղթանութիւնը տեղափոխութեան համար նախակված է նոյն մաքսագինը, ինչ որ այժմ առնվում է երկրագործական գործիքներից:

Անդրկովկասեան երկաթուղիների վարչութեան մէջ միտք է ծագել հրատարակելու մի առանձին պարբերական թերթ՝ «Вѣстникъ Закавказскихъ Железныхъ Дорогъ» անունով:

ՊԵՏԻՊԵՐՈՎՍԿԻԻ մեզ գրում են. «Աշխարհի զանազան անկիւններից խմբված հիւանդների բազմութեան հետ՝ թափվում են այստեղ եւ անառակ կանանց ստուար խմբերը, որոնք զուգված զարդարված՝ շրջում են ամեն տեղ եւ հրապուրում մի հիւանդ եւ բժշկութեան համար այստեղ եկող երիտասարդներին: Հիւանդը գալիս է, դիցուք, ոսկրացաւից ազատվելու, բայց, յաճախ, վերադառնում է բռնկած վէճերով: Իսկ զորորդը, ինչպէս կարծում են, խեղդվում է զետուռ, հինգերորդն էլ փախելով դատվում է: Աւագակների հրացանները լորվածի հետ բերին Սոփախա:

Ժամայի աւելի սոսկալիկն ծաւն այն է, որ պարիսերներ վերադառնալիս առանց պատկառանքի պնդում են, թէ այս ինչ կուրորդ վնասնաբեր կուրորդ է եւ չարժէ այլ եւս զն: Զարկը մասամբ մեղմացնելու պարտականութիւնը ծանրանում է այստեղի բժիշկների: Դրանք իրանց դեռ վէճերական փախուցիչ չընկած պացիէնտներին պիտի զգուշացնեն՝ չուրկելու անհրաժեշտ վիտալիզմը թափառաշրջականացից: Ի դէպ, բժշկապետ Բուդուկովսկի իւրաքանչիւր պացիէնտին, մասնաւորապէս իրներին, տալիս է նման զգուշութիւնները: Խնդրում եմ հետեւ կենաք շրջող կանանցից հրացանից 10-ից—9-ը հիւանդ են: Ծանկալի է, որ բոլոր բժիշկները ձեռք ձեռքի տուած կուրսայ չարիքի դէմ:

ՅԱՐԻՑԻՆԻՑ մեզ գրում են. «Նորերս տեղի ունեցաւ այստեղի հայ աղօթատան երէցի ընտրութիւնը: Ծարիցին հայերը զանազան կողմերից հաւաքված վաճառականներ են, Նոր Նախիջևանից, Պարսկաստանից, Թիֆլիսի թուղ մօտ 150 հոգի. նրանք ունեն մի աղօթատուն հասարակ վարձովի շէնքի մէջ, մի հանայ, որի վրա է ծանրացած նաեւ շրջապատի հայ գաղթական հայերին հովուելը: Աղօթատան ինչպէս եւ քահանայի տնտեսականը հոգում այդ մի բուն ժողովուրդը յատուկ յանձնառւողի մեծքով, որի անդամները եօթն են: Ներքի առաւելութեամբ երէցի տնտեսականը զոս Կիստեանց, իսկ նրա օգնական պ. Կիստեան: Պ. Պօղոս Կիստեանը Նոր Նախիջևանի առաջնակարգ վաճառական է, տարեկան մի երիտասարդ, Նոր երէցի տնտեսականը մեծ պարտականութիւն է դրված: Այստեղի համայնքը, չը բաւականանալով վարձովի աղօթատանը, աշխատում է առանձին եկեղեցի ունենալ, որի նախագիծը ստացված է. եւ մի յոյս ունեն, որ երիտասարդ երէցի տնտեսականը ընդունելով կը ձեռնարկվի եկեղեցու շինութեան գործը, որ մինչեւ օրս ձգձգվում է: Ընտրութեան թուղթը ուղարկված է Աստուր խնդի հոգեւոր առեւտրի հաստատութիւնը:

ԲԱՌՈՒՄԻՑ մեզ գրում են. «Բաթում է եկ Պարիզի կոնսերվատորիայում սովորող երգչուհի Գալուստ Բոյաճեանը: Պարսիսի տարի է մնում աւարտելու Նա կամենում է մի ճանապարհորդութիւն կատարել Երեւանի նահանգում հայկական ժողովուրդական երգչի ժողովուրդը համար: Սեպտեմբերի վերջերի երգչու մի կոնցերտ կը տայ Թիֆլիսի արքայական թատրոնում:

ԳԻՒԼԱՔԱՐԱԿ գիւղից մեզ գրում են. «Նա առատ բերք է խոստանում այս տարին մի գիւղացիներին եւ զա քաղաքային: Եւ կարծում, որովհետեւ ոչ մի տարի գիւղացիները սերմանելու ժամանակ իր երազած յոյսերը իրականացած չէ տեսել: Աւագակութեան մօտ փին ասել խօսելը աւելորդ է. բաւական չէ գիւղացուն իրան ցաւը, կեղեքիչ վնասնաբերութիւնը: Եւ ուրեք, եւ աւագակներ իւր խմբերով սարերումն են յարձակվում մէկի ձին են տանում, միւսի ոչխարները, մի ուրիշից մի հատիկ կովը եւ այլն: Այդ բանը, ի հարկէ, շատ կը վնասվի մեր գիւղացուն՝ եթէ նա այս տարի անձի յոյս չուենաք:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսի ծանր պարի վրա երեւան եկած աւագակներին համարելու համար գիւղական աղմկիւնտարի մամաք սկսվելուն պէս, կանգնեցրել էր սարերի նիկներ: Այս օրերս հինգ զինաւորված թուրքաւագակներ մի գիւղի արօտատեղից քշում են տուար դէպի Եւրա գետը: Այս բանը նկատվում են սարածիկները եւ հետամուտ են լինում: Նրանց Հանելով գետի եզրը՝ աւագակները ուղղում են անցկացնել տուարը գետի մէջ: Այս ժամանակ սարածիկները վրա են հասնում եւ հրացաններ են պարպում նրանց կողմը: Երեւան աւագակ սպանվում են, մէկը վիրաւորվում է իսկ չորրորդը, ինչպէս կարծում են, խեղդվում է զետուռ, հինգերորդն էլ փախելով դատվում է: Աւագակների հրացանները լորվածի հետ բերին Սոփախա:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Մեր հարցը ցանկալի լուծում ստացան: Ա. Ամիրխանեան վնասներ լինելուց իր պարտքը 1076 ր. վնասներ կօսիստորիս յանձնել է բանալը:

ՀԱՐԱՅԻՑ մեզ դրում են. «Բազում հասանա-
լիքներ չունենալով 13-ին շրջից Հուլիսի գաւառը,
որտեղ չեն կարողացել շատաւնի, ուր կը մնայ
այդտեղից 1-ը, ապա կը վերադառնայ
Հուլիս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

—Երկրպետան դաշնակցութեան վերանորո-
գման պայմանները մասին տարածված լու-
սերը, որոնցով անընդհատ զբաղվում է արտա-
գաւառական մամուլը վերջին ժամանակ, այժմ
հետաքրքրական են դարձել: Լիւնդոնայի
«Երկրպետ» մէկը հաւատարմութեամբ է, ինչ
պայման դաշնակցի միջոց դուրս է գցվում այն
բոլորը որով Բոսնիայի պարտաւորում էր,
Ռուսաստանի եւ Աւստրո-Ունգարիայի մէջ ծա-
րացած պատերազմի դէպքում, մի կողմէն զորք
ուղարկել Ունգարիայով դէպի Իտալիայի ստորին
հոսանքը միանալու աւստրիական եւ ռուսի-
ական զորքերի հետ, որոնք ապա, ռուսիա-
կան կարի թագաւորի հրամանատարութեամբ,
կը սկսեն պատերազմական գործողութիւններ
Ռուսաստանի դէմ: Այս տեղեկութիւնը մեծ
թաւաբեկութեամբ բերեց գերմանական մամուլի
մէջ: Բերլինում պնդում են, թէ այդպիսի
բոլորած երբէք չէ էլ մտել երեքսդետան դաշ-
նակցութեան պայմանագրի մէջ, թէ դա պա-
տերազմական կոմպլեքսներին մէկն էր, որոնց
հպատակապատրուածութիւնը փոխվում է ժամա-
նակի պահանջների համեմատ եւ որ այդչէն ու-
ղարկւած է անկարելի լինելու պատճառով,
ինչպէս օրինակում է եւ այն կոմպլեքսներ, որի
գործումը Բոսնիայի պարտաւորում էր մի
գործարարին ուղարկել Բէյրութի շրջանը, եթէ
Գերմանիան պատերազմ սկսէր Պրանսիայի
դէմ: «Berliner Tageblatt» ասում է, թէ ե-
րեքսդետան դաշնակցութեան վերանորոգման
համար վարած բանակցութիւնները ժամանակ
խառնում չէ եղել այդպիսի կոմպլեքսների
մասին, թէպէտեւ դաշնակցի պետութիւնների
պատրուածութիւնը փոխադարձաբար օգնու-
թիւն ցոյց տալ միմեանց պատերազմի դէպ-
քում միշտ եղել է եւ այժմ էլ պահպանում է
իր սկզբը: «Berliner Tageblatt» դիտարկում
այս անհամապատասխան նպատակը համարում
է դաշնակցութեան մի կաթիլ խառնել Բոսնիայի
եւ Ռուսաստանի ներքին բարեկամութեան մէջ
եւ մի եւ նոյն ժամանակ ստիպել երեքսդե-
տան դաշնակցութեան անդամներին հրատա-
րակելու դաշնակցի բովանդակութիւնը: «Natio-
nal Zeitung», խոսելով նոյն հարցի մասին, աս-
ում է, թէ ամենայն դէպքում վերջին տեղեկու-
թեան մեկնութիւններին եւ անհիմն ենթադրու-
թիւններին—դաշնակցի հրատարակումն է նախ-
կին կամ այժմեան ձեռք:

—Անգլիական լրագրիչները հաղորդում են,
թէ Եղուարթի թագաւորը նշանակել է մի մաս-
նագործ, որ թագաւորութեան օրը պէտք է
ուղարկի հարաւային Աֆրիկա՝ քննելու տեղե-
ւորները, թէ Կապի գաղթականութեան ա-
պստաններին որքան արժանի է ներման: Մաս-
նագործը կարգված է չորս անդամներից: Խա-
ղաղութիւն կապիւրեց յետոյ լուրեր էին պտը-
նում, թէ իբր անգլիական իշխանութիւնները
զապալի կերպով հաւատարմութեան քննիչին,
որ թագաւորութեան առիթով Կապի եւ նա-
պոլի պատմաբանները ներուժն կը ստանան եւ
որ միայն այդ հանգամանքը ստիպել է բռն-
արարողներին խաղաղութեան այն պայմանը,
որով ապստանները զրկվում են ձայնի իրա-
ւունքից եւ ենթարկվում են պատմիչների Սա-
կայի անդակաւն մամուլը միաբերան յայտա-
րարում է, թէ յիշված մամուլագործի նշանա-
կելը անհեւքն չը պէտք է համարել իբրեւ-
նում: Խոստումն էր պատճառ: Լրագրիչները
տեսնում են մամուլագործը նշանակելու մէջ
ողորմութեան մի գործ, որ յոյց է տալիս
անգլիական թագաւորը դէպի իր նոր հպատակ-
ները «Daily Express» ասում է. «Մամուլ-
ագործի նշանակելը քննիչները հասնում են իրեն-
ցի հետ: Այս տեսակ միտն ծագել է այն փո-
փոխութիւններից, որոնք տեղի ունեցան հաշ-
տակութիւն կրեւելուց յետոյ: Այն ժամանակվա-
նից յետոյ հարաւային Աֆրիկայում խա-
ղաղութիւն եւ կարգ ու կանոն մտցնելու յոյ-
ւորը ստատիկ անցին: այս պատճառով էլ չէ
կարելի իսկական իմաստուն գործ չը համարել
այնպիսի նշանաւոր իրաւաբանների Աֆրիկա
ուղարկելը, ինչպիսիք են լորդ Ժայրագոյն դա-
ւաւորը Բիգամ եւ սէր Ջոն Արդատ Էնդհա-
նոր ներքին կարող էր բացատրվել, որպէս
թուլութիւն, ուստի եւ փաստագրեր էր, բայց
երբ կարելի է թեթեւացնել ապստանների
պատմիչները, առանց տեղից տալու սխալ բա-
ցատրութիւններին, Անգլիան պէտք է ցոյց տալ,
որ նա միջնորդել լինել չը գիտէ»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԻՆ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

—Ինչու գաղտնիք մնայ, ինչու չը յայտնվի
այդ խօսքերով դիմեց ինձ հին-Նախիջեւանցի
մի պարսիկ, որի հետ պատահեցին փողոցում
ես չը հասկացայ նրա հարցը:
—Ինչ էր ուզում ասել, հիմեցի եւ նրան:

ինչ գաղտնիքի մասին էր գուց խոսում:
—Ձեր անկարկած գաղտնիքների մասին,
պատահականեց նա, որչը վերաբերում են մեր
Նախիջեւանի գաւառին:

Բանից պարզվեց հետեւեալը: Իմ վերջին
Մանրանկարներից մէկում, որտեղ ես յայտնել
էի, թէ ստացել եմ ութ գրութիւն Նախիջե-
ւանի եւ նրա գաւառի մասին, ես մէջ էի ըն-
դել միայն չորսը, իսկ միւսներն մասին լուր
էի, նկատելով թէ թող նրանց բովանդակու-
թիւնը զգալունիք մնայ առ այժմ:

—Առանձին գաղտնիք չը կայ, բացատրեցի եւ,
բայց ես անշարմար էի համարում գրութիւննե-
րը առանց կրճատելու հրատարակել, որովհե-
տեւ նրանք պարունակում են մի շարք այնպիսի
փաստեր, որոնց լոյս աշխարհ հանելը ունի
իր գործնական անպատեհութիւնները:

—Ձե, չէ, ապա ուրիշ թղթերը լաւ չէ, պն-
դեց խօսակիցս, աւանգէր պոծէր, մեզ հետա-
քրքրում են մեր գաւառին վերաբերեալ գրու-
թիւնները:

Ես չը խոստացայ հրատարակել լրակատար
կերպով բոլոր գրութիւնները:
Ես մտնելի նրանցից անել քաղաւածքներ, որ
եւ ներկայացնում եմ:

Մի գրութիւն, որ ստացել եմ Ապրիլունի-
սի, նկարագրում է գիւղական հարստահարու-
թիւնների մի քանի բնորոշ դէպքեր, որոնք
տեղի են ունեցել թէ այդ գիւղում եւ թէ
շրջակայքում:

Սակայն իմ թղթակիցը խոստովանում է, որ
անկարելի է զօրութեան տիրութեամբ պայքարել կե-
ղեքման եւ վաշխատութեան դէպքերը, որով-
հետեւ գրեցի վախճանում են հարստահարող-
ներից եւ ինչ փաստաւորում արձակ համարձակ
կտիւ մղել իրանց դէմ:

Թղթակիցը յայտնում է անուններ եւ ազգ-
անուններ, բայց ես չեմ կարող օգտվել նրա
հաղորդած տեղեկութիւններից, որովհետեւ կե-
ղեքողների համար գոմար չէ ասել, թէ այդ
բոլորը զրպարտութիւն է եւ հնարված է նը-
րանց վարել վաւր ցեղերու նպատակով:

Մի ուրիշ գրութիւն պարունակում է իր
մէջ գաւառական պատմութիւններ տեղական
կենսոյից:

Թղթակիցը, ի միջի այլոց, պնդում է, որ հո-
գեւորականները պէտք է պարապվեն մեղ-
ւա պահուցումով:

«Մոռի, ասում է նա, հարկաւոր կը դալ եւ
կեղեցիներին, իսկ մեղքը կարելի է եւ ուտել
եւ ծախել եւ նուրբ ուղարկել»:

Ի միջի այլոց, նա ուղարկել է ինձ մի բնո-
րոշ նամակ, որը գրել է Նորս գիւղի Աւետի
քահանայ Սմբատեանցը Նախիջեւանի նախկին
ֆելդշէր Ալեքսանդր Միլի-Պիլիսապարեանին:
Ահա այդ նամակը:

Պ. Աղեքսանդր

«Հարկաւոր գործով գնացել էի Արխիճ գոր-
ծակալ Տէր-Պապուկի մօտ Ստանալով Ձեր
նամակը, կարգադրեցի: Ինչ որ հարցրել էիք: Տէր
Պապուկը հայր, թէպէտ կամենում էր
պատասխանել Ձեզ, բայց ժամանակ չէր գտա-
նում գրելու: Ձեզից բնորոշ քաղաքացի-
համար ինձ խնդրեց Ձեզ եւս տեղեկութիւն
տալ, որ Ձեր քահանայ ամօթանք չը քաշի
վարդապետի կամ քարտուղարի մօտ գնալ եւ
իր խաչն ստանալ: Տէր-Պապուկը ասում
է, որ երբ որ իմ կոնգրակը եկել էր՝ Տէր-
Մարկոսը (հոգեւոր կառավարութեան նախ-
կին անդամ) գրել, չորհաւորել էր իմ կոն-
գրակը 10 ֆունտ լաւ մեղրով: Ասում է՝
մտածեցի, որ էս հալա անդամն է 10 ֆուն-
տով շնորհաւորում, բա յաջողութիւն եւ քա-
րտուղարին ինչ անեմ, ինչպէս տեսնեմ: Մտա-
ծեցի, որ աւելի լաւ է էլի իմ ձանձերին
խնդրեմ, որ նրանց գլխիս ճար տեսնեմ, թէ
չէ ինձի քիպարու կանխն սկսեցի փեթիկ-
ները քրքրել, մանգալ, էլի լաւ էր 10 ֆունտ
մեղր յաջողել, 10 ֆ. Տէր-Մարկոսը եւ
10-ի մօտ էլ քարտուղարին զգեցի ու էտպէս
երեսս պարզ գնացի Նախիջեւան: Մտաւայ
գրել, որ ինչպէս Տէր-Պապուկըն է ասում,
բացի սրանից դուք տանեալինք մանէթ էլ
մեղրի հետ քիտա դարձակների վարդապետի
սեղանի վրա: դեռ 20 մանէթ էին ուզում, որ
կոնգրակը տային, հազիւ հազ 15 մանէթով էլ
պոծայ ձեռներեց, դուրս փախայ, ստանալով
կոնգրակը»:

Այս է նամակի բովանդակութեան էական
մասը: Պէտք է նկատել, որ ինձ ուղարկված է
իսկական նամակը եւ ոչ թէ պատճէնը:

Սակայն միթէ ճիշդ է այս բոլորը: Ես չեմ
ուզում հաւատալ: Միթէ դա մի թիւրիմացու-
թիւն չէ:

Ես չեմ հաւատում եւ այն պատճառով, որ
միշտ յիշում եմ չորս տէրտէքների ուղարկած
հեղքերը: Միթէ չորս տէրտէք միմասին հա-
ւաքված, ստան շատողութեամբ, քննելով, մտա-
ծելով, չափելով եւ կշռելով կարող էին սուտ
մոզոնել: Դա անկարելի է: Այդ պատճառով ես
անպայման կերպով համարում եմ ներկայ նա-
մակի բովանդակութիւնը կատարեալ զրպար-
տութիւն:

Ձե եղել եւ չէր կարող լինել:

Երբոր գրութիւնը խօսում է գիւղական աշ-
րհեւրի մասին:
Մեր տղամարդիկ շատ չը կան գիւղերում,
որովհետեւ նրանք չուտով պահվում են եւ
այն էլ շատ անգամ մատաղահաս օրերը:

հետ Բայց կայ այրիացած տղամարդկանց մի
դասակարգ, որ օրինական ձեւ չունի պահվե-
լու: Դա այրիացած քահանաներն են: Իրանց
թիւը շատ մեծ է Նախիջեւանի գաւառում:

Իմ թղթակիցը անա այդտեղ բայց է անում
մի շատ մեծ բռնիք եւ ամեն տեսակ պատու-
թիւններ է անում:

Ես անշարմար եմ համարում նրանց առաջ
բերել:

Թղթակիցը էր երկար նամակի վերջում մի
այսպիսի հարց է դնում: «Միթէ» ժամանակը
չէ այրիացած քահանաների պահվելու թոյլա-
ւութեան հարցը դրականապէս լուծելու: Դալ-
թակցութիւնը շատ մեծ է, հասարակ ժողո-
վուրը վերջով լուծ է ապօրինի կենսակցութիւն-
ներից: Ինչու գայթակղութեան առաջը չառ-
նել»:

Ես առաջ չեմ բերում եւ այն փաստերը,
որոնք վերաբերում են մի շարք վավաչտ եղե-
րութիւններին:

Լուրսիւն:

Նոյն թղթակիցը պատմում է Կզուսի գիւղի
մէջ տեղի ունեցած մի շարք դէպքեր, նկա-
րագրում է ջրի վերաբերութեամբ տեղի ու-
նեցած բազմաթիւ իրադարձութիւններ եւ բա-
ցատրում է, թէ ինչու նրանց կրթված քահա-
նան հեռացաւ գիւղից եւ գործակալութիւնը
յանձնվեց տէր թաղէտին, Նախիկին պօչտա-
լիսին:

Չորրորդ գրութիւնը Ջահուկից է, այն գիւ-
ղից, որի պատմութիւնները երեք օր եւ երեք
գիւղի չեն պատմվի:

Թղթակիցը պատմում է մի հարսնախօսու-
թեան բնորոշ դէպք, գիւղի մէջ գոյութիւն
ունեցող հակափոխութեան տրամադրութեան
եւ վերջապէս մի մատուռի վերանորոգութեան
մասին:

Ջահուկ գիւղի հողաբարձները եւ երեց-
փոխ երկար ժամանակ չէին կարողանում բա-
ցատրել, թէ ինչու է հերթական դարձել մի հին
մատուռի վերանորոգութեան հարցը եւ թէ ին-
չու Տէր Արսէն քահանայն այնպէս սաստիկ կը-
պել է այդ հարցին:

Յետոյ բացատրեց:

Տէրտէքը շատ բարեպաշտ, կրօնասէր, հեզա-
բարդ մի անձն լինելով, մտադիր է եղել մի
ստատածանոց լաւ գործ կատարել:

Դա այն նշանաւոր չորս տէրտէքներից մէկն
է, որ համոզեցուցի հեզքում էին ուղարկել իմ
հաղորդածների դէմ եւ որը տպվելով իմ «Մա-
րանկարի» մէջ, ցրվեց բոլոր կասկածները եւ
զրպարտութիւնները Նախիջեւանի խաչ ստա-
ցողների մասին:

Բայց որքան ապերախ տու թիւն էր երե-
ւանի կոնսիստորիայի կողմից: Նա, թղթատրե-
լով օժիլ նորոգած կողմերը, պատիւից օժու-
մից յետոյ իսկոյն բանայինները յանձնել երեց-
փոխին եւ հողեւորականութեան ժամանակին
բարեգութիւններ չառաջացնելու համար:

Թղթակիցը, բանաստեղծական ոգրապոյտ-
ներով, նկարագրում է մատուռի օժումը, յա-
ղորդի գալ-գնալը, ուխտաւորների զուարճու-
թիւնները եւ բնորոշ տեսարանները:

Ձը նայելով գեղեցիկ եղանակին, զուռայի
գիւ ձայնին, ուխտաւորների երգ ու պարին,
յաջորդը, որ գնացած է եղել Ջահուկ մատու-
ռը օժելու, մտում է դժգոհ ջանկեցիներից:
Նրան շատ ստան են բնորոշում: Հակասփոխ-
ական տարրը ուսեղ է Ջահուկում: Հողա-
բարձները եւ երեցփոխը կծու ճշմարտու-
թիւններ են յայտնում, երբ Տէր-Արսէնը բոլոր
վերջերը մտնում են իւրուր:

Միթէ կարելի է, բացականչում է թղթա-
կիցը, միթէ տօնի խաթրու գոնէ չէր կարելի
մտնալով անհատութիւնները եւ միմեանց նե-
րաւոր մի լաւ լեզ անել: Հակասփոխութիւնը
այնքան կուրացրել է ջանկեցիներին, որ նրանք
չեն ուզում լսել Տէր-Արսէնի շատադուլութիւն-
ները:

Մատուռի անունը դրվել է Ս. Ստեփանոս:
Այդպէս էին թեւադրել երազատես կանաչը:

Թղթակիցը այնուհետեւ պատմում է Ջահուկ-
ի առեկոսները գիւղի եղելութիւնների մա-
սին: Նա, ի միջի այլոց, հիմնելով Ջահուկի
փորձերի վրա, խորհուրդ չէ տալիս, որ ժամ-
հանքերի կանաչ եկեղեցիներն աւելին, որովհետեւ
որ ժամահանքերի անմիջական պարտաւորու-
թիւնն է:

Սրանով եւ կը բաւականանամ Ուրիշ քա-
ղաւածքներ մտադիր չեմ ներկայացնելու իմ
ստացած գրութիւններից:

Պէտք է խոստովանեմ, որ այսօր թէեւ շատ
բաների մասին աշխատեցի քողարկված անցնել,
բայց եւ այնպէս ստիպված էի մի այնպիսի
վարդագրել եղբւր բարձրացնել, որի ետեւում
չառ կան անախտած տեսարաններ:
Ինձ վրա նրանք ծանր են ազդել եւ ես հան-
գիստ կը գրայի ինձ, եթէ երկար ժամանակ
առիթմներ չունենայի «ազոնաւազքի» ներթերին
գրելու:

Թիւնների ժողովածուի» մէջ յուլիսի 19-ին
տպագրված է Բարձրագոյն հրաման ուսումն
աւարտելու համար զինուորագրութեան վերա-
բերմամբ լրացուցիչ յետաձգումներ խնդրելու
կարգի մասին, ազնուականների համար հիմն-
ված հաստատութիւնների բարեօրոշման եւ նը-
րանց վերաբերեալ օրէնսդրութիւնների վերա-
բնութեան մասին:

ՎԱՐՇԱՎԱ Վարչապետը կեղծ հինգհարեւր
բուրժուանցների երեւալու պատճառով գաղտնի
ոստիկանութիւնը հետախուզութիւն կատարեց
եւ գտաւ կեղծողների հետքը. բանկային տան
սեփականատէր Պինչիվսի, լուսանկար Պինի
եւ Վարչապետի բնակիչ Սօկուլսի ցոյց տուին,
որ պատուիրում էին թղթագրաններ Բերլի-
նում մի ոմն Շրեդերի: Շրեդերը ձերբակալվեց եւ
նրա բնակարանում գտնվեցին լիտագրաֆիական
քար եւ դրամ կեղծելու համար կարեւոր բոլոր
գործիքները:

ՊԱՐԻՉ: «Echo de Paris» լրագրի ասելով՝
Պապը բողոք յայտնեց ֆրանսիական կառավա-
րութեան այն միջոցների վերաբերմամբ, որոնք
ձեռք են առնված կրօնական միաբանութիւն-
ների դէմ: Բողոքի բնագիրը չի հրատարակվի
այժմ, որպէս զի կառավարութիւնը տեղիք
չունենայ նոր միջոցների դիմելու:

ՊԱՐԻՉ: Սպանական այրի թագուհի Մարիա-
Պիտիտին եկաւ Պարիզ եւ վաղը կայցիլէ Ի-
զաբէլլա թագուհուն Կոմպլէնում եւ ապա
կուղեւորվի Վիեննա:

ԲԵՐԼԻՆ: Մաքսային մասնագործը ընդու-
նեց օրինագծի 796,797,820 եւ 821-րորդ յօդ-
ւածները Սօցիալ-դեմոկրատ Բէրնշտէյն ատա-
լարեց մի մասնագործով կազմել դաշնակցից
պետութիւնների լիազօրեցից եւ ընթացողի
անդամներից՝ քննելու գերմանական սինդիկատ-
ների գործունէութիւնը եւ նրանց պայմանա-
գրութիւնները: Առաջարկութիւնը յետաձգված
է մինչեւ օրինագծի երկրորդ ընթերցումը:

ԼՈՒՐԻՆ: Ապստամբների միութեան ճաշի
ժամանակ լորդ Բօգբերի յայտնեց, թէ Լիդ-
սի հիւսիսային շրջանում սաստիկ հարուած հաս-
ցրեց կառավարութեան հեղինակութեան: Լիդ-
սում տարած յաղթութիւնը հետեւանք է այն
համարալի վերաբերմունքին, որ ազատամիտ-
ները ցոյց տուին մաքսաբանների եւ ժողովրդա-
կան ուսուցման հարցերում: Ապստամբների
միութիւնը, որին պատկանում է Լիդսի նոր
ներկայացուցիչը, պէտք է ծառայէ որպէս միու-
թեան կենտրոն բոլոր ազատամիտների համար:

ՊԵՆԻՆ: Արտաքին գործերի վարչութիւնը
հաղորդեց ամերիկական դեսպանին, թէ կառա-
վարական զորքերը սպանեցին 300—400 հոգի
ապստամբներից: Սէչուանում խաղաղութիւնը
վերականգնված է:

ՊԱՐԻՉ: Միմարտերի խորհրդում Կոմս
յայտնեց, թէ նա ստորագրել է հրամաններ, ո-
րոնք վերաբերում են կրօնական մօտ 40 հա-
մայնքներին: Այդ համայնքները չը փակեցին Ի-
րանց հաստատութիւնները՝ սպանելով փական
հրամաններ:

Կ. ՊՈԼԻՍ: Չորսօգորական կառավարութիւ-
նը ընդունեց Բ. Դրան առաջարկութիւնը սահ-
մանագիծը կանոնաւորելու եւ վարձատրութեան
հատուցման վերաբերմամբ:

ՊԵՆՏԵՐՈՒՐԻ: Օրլէան քաղաքի մուսիցիկա-
լիտէտը որոշել էր մի գրօսանք կազմել Մար-
տինիկա կղզու վնասվածների օգտին, որի ժա-
մանակ կարգը պէտք է պահպանէին բոլոր եւ-
րոպական պետութիւնների ոստիկանական հա-
մագգեստ հազած ոստի

